ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՑՔԱԶԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
- 1) Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դերքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1000 դրամ :
- 2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ :


Սևաքարի համայնքի ղեկավար՝



Ա. Հակոբյան

22.12. 2016թ

Գ. Սևաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱԲԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Սևաքարի համայնք

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> Դեկտեմբերի 2016թ. N 17- Ա

ՍԵՎԱԲԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐԶԻ ԶԱՓԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը կողմ 5, դեմ 0 ձեռնպահ 0 քվեարկության արդյունքներով համայնքի ավագանին
որոշում է՝

1. Սևաքարի գյուղական համայնքի ղեկավարի աշխատավարձը սահմանել 96.7 հազ. Դրամ:

Համայնքի ավագանու անդամներ՝

- | Կողմ 5 | դեմ 0 | ձեռնպահ 0 |
|---------------------------------------|-------|-----------|
| 1. Լ. Գյուրջյան <i>[Signature]</i> | | |
| 2. Գ. Խաչատրյան <i>[Signature]</i> | | |
| 3. Է. Պապյան <i>[Signature]</i> | | |
| 4. Պ. Հովհաննիսյան <i>[Signature]</i> | | |
| 5. Վ. Հովհաննիսյան <i>[Signature]</i> | | |

Սևաքարի համայնքի

Ա. Հակոբյան

22. 12. 2016թ

Գ. Սևաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՎԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Մյուսիքի մարզի
Սևաքարի համայնք

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> Դեկտեմբերի 2016թ. N 18 - Ա

ՄԵՎԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26 - րդ մասով և 32 - րդ հոդվածի 1 - ին մասով, << Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 72 - րդ հոդվածի 1 - ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0 քվեարկության արդյունքներով համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Սևաքարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1 - ի :
2. Որ ժը կորցրած ճանաչել Սևաքարի համայնքի ավագանու 21. 12. 2015թ-ի Սևաքարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին թիվ 23 <<Ա >> որոշումը :

Համայնքի ավագանու անդամներ

Գողմ 5

դեմ 0

ձեռնպահ 0


1. Լ. Գյուրջյան
2. Գ. Խաչատրյան
3. Բ. Պապյան
4. Պ. Հովհաննիսյան
5. Վ. Հովհաննիսյան

Սևաքարի համայնքի ղեկավար

Ա. Հակոբյան

22. 12. 2016թ

Գ. Սևաքար




**ՍԵՎԱՔԱՐԻ ՀԱՍՄԱՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Աշխատակիցների թվաքանակը _____
2. Աշխատակազմի հաստիքային ազդեցված է պաշտոնային դրույքաչափերը

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԵԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ
ՔԻՄԱՔԱՎԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Համայնքի ղեկավար	1	96700
ՀԱՍՏԻՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
Աշխատակազմի քարտուղար	1	77000
Առաջատար մանուկներ – հարկադատ	1	73000
ՏԵԽՆՈԳԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՔ		
Գրադրությունավար	0.82	63740
Անուսրավար	0.82	59524
Համարարար	0.63	45833

Սևաքար համայնքի ավագանու



Ա. Հակոբյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Սևաքարի համայնք

ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> Դեկտեմբերի 2016թ. N 19 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2016 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի
2 - րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը կողմ 5, դեմ 0,
ձեռնպահ 0, քվեարկության արդյունքներով համայնքի ավագանին
որոշում է

1. Հաստատել Սևաքարի գյուղական համայնքի 2016 - 2021 թվականների զարգացման
ծրագիրը : (կցվում է)

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ 5

դեմ 0

ձեռնպահ 0

1. Լ. Գյուրջյան
2. Գ. Խաչատրյան
3. Է. Պապյան
4. Պ. Հովհաննիսյան
5. Վ. Հովհաննիսյան

(Handwritten signatures of the council members)

Սևաքարի համայնքի ղեկավար՝

(Handwritten signature of the community leader)


Ա. Հակոբյան

22.12.2016թ

Գ. Սևաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԵՎԱՔԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2016 – 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՐԱՆ ԾՐԱԳԻՐ

Գործադիր համայնքի ղեկավար



Ա. Հակոբյան

Հաստատվել է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սևաքար
համայնքի ապագանու 22 շենյեմբերի 2016 թվականի թիվ 6 նիստի
թիվ 19 Կ որոշմամբ

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն
 - 2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն
 - 2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը
 - 2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը
 - 2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները
 - 2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ
 - 2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՄ) վերլուծություն
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում
 - 3.1. Համայնքի զարգացման տեսլական
 - 3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ
4. ՀԶԾ ֆինանսավորում
5. ՀԶԾ մոնիթորինգ:

1. ՍԵՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՑՈՒՆԻ ԽՈՍՔ

- Համայնքի զարգացման տեսլականն առաջիկա 5 տարիների համար

ՀՀ Սյունիքի մարզի Սևաքար գյուղական համայնքի զարգացման ծրագրի ռազմավարությունն է լինելու համատեղ ջանքերով, նպատակային ու հետևողական աշխատանքների միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ – տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ և գրավիչ բնակավայր :

Համայնքում տիրում է բավականին առողջ մթնոլորտ, շատ լավ է ավագանի – բնակչություն, ավագանի – համայնքի ղեկավար հարաբերությունները, և հաշվի առնելով որ բնակչությունը պատրաստ է համատեղ ջանքերով հաղթահարել առաջադրված խնդիրները, հավանության արժանացած բնակչության սոցիալ – տնտեսական զարգացմանը նպաստող ծրագրերը, առաջիկա 5 տարիների ընդացքում զարգացման հիմնական ուղղություններ է ընտրվում խմելու և ոռոգման ջրագծերի վերանորոգումը, խմելու ջրի ներհամայնքային նոր ցանցի կառուցումը, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգումը, գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերումը :

Նախորդ տարիներին նշված հիմնախնդիրները ընդգրկված էին համայնքի „սոցիալ տնտեսական զարգացման քառամյա ծրագրում“, սակայն չիրագործվեցին ֆինանսական միջոցներ ու դոնոր կազմակերպություններ չլինելու պատճառով :

- Համայնքի հիմնական պրոբլեմները, զարգացման խոչընդոտները և դրանց ծնող պատճառները

1. Խմելու ջրագծի վերանորոգում և խմելու ջրի նոր ներհամայնքային ցանցի կառուցում

Համայնքի խմելու ջրագիծը կառուցվել է համայնքի բնակչության ջանքերով 1975 թվականին : 5 կմ . երկարությամբ ջրագծի և ներհամայնքային ցանցի մաշվածությունը այնքան մեծ է, որ ջրի կորուստները հասնում են 50% և ավելին : Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որը վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ :

Բնակիչների կողմից վերանորոգումները կատարվում են մասնակիորեն, և որոշ դեպքերում դառնում անախորժությունների պատճառ բնակիչների միջև :

2. Ոռոգման ջրի ջրագծի վերանորոգում

1990 թվականին համայնքի բնակիչների ջանքերով հարևան Եղեգ գյուղի վարչական տարածքից 7կմ . երկարությամբ ջրագիծ է կառուցվել, որից օգտվում էր 66 շահառու բնտանիք, ոռոգվում էր տնամերձ հողամասերը :

Տարիների ընդացքում ջրի պակասության, եղանակային պայմաններից, ջրագծի խողովակները քայքայվել, հիմնականում շարքից դուրս են եկել : Ընդացիկ նորոգումները ոչ մի արդյունք չեն տալիս, տարվա մեծ մասը ջրատարը չի շահագործվում :

Ջրատարի հիմնովին նորոգման դեպքում ջիր կորուստները կհասցվեն նվազագույնի, զգալիորեն կբարելավվի բնակչության սոցիալական վիճակը :

3. Գյուղ տեխնիկայի պակաս

Համայնքը ունի բավականին հողատարածքներ՝ 142 հա . վարելահող , որի հիմնական մասը գյուղ տեխնիկայի պակասի պատճառով չի մշակվում կամ օգտագործվում է ոչ նպատակային :

Մնաքար համայնքում կա 1 թրթուրավոր և 1 անվավոր տրակտոր որոնք նախկին խորհրդային ժամանակներից մնացած ժառանգություն է ,որոնց վրա կատարած ծախսերը ավելի շատ են դրանց օգտակար գործակիցը :

Համայնքում չկա հացահատիկահավաք կոմբայն , որը հիմնական պատճառ է հանդիսանում ցանքերի նվազման , քանի որ մինչև մոտակա գյուղերից կոմբայն կրերվի , բերքի հիմնական մասը գերհասունանում կամ ոչնչանում է կլիմայական պայմաններից ելնելով :

4 . Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները անցանելի վիճակում պահելու համար պետք է պարբերաբար կատարվեն վերանորոգումներ , մաքրվեն ջրահեռացման առումներն ու սեղավատարները :

Նշված հիմնախնդիրների բացահայտման համար հրավիրվել են քննարկումներ բնակչության մասնակցությամբ , ուսումնասիրվել բոլոր առաջարկները և հավանության արժանացածները դարձրել հետագա աշխատանքների հիմնական ուղղություն :

Նշված հիմնախնդիրների լուծմամբ գյուղ մթերքների արտադրման ծավալները մեր գնահատումներով կավելանա շուրջ 40 – 50 % : Գյուղացիական տնտեսությունները հնարավորություն կստանան արտադրված գյուղ մթերքների որոշակի մասը վաճառել շուկայում :

Բնակչության սոցիալական վիճակի բարելավման հետ մեկտեղ ակնկալվում է բնակչության թվաքանակի ոչ բնական աճ : Երիտասարդությունը աստիճանաբար կվերադառնա գյուղ :

5 . Ծիսակատարությունների շենքի ծա ծկի և տանիքի վերանորոգում

Ծիսակատարությունների շենքը՝ որը նախկինում եղել է համայնքի ութամյա դպրոց , գտնվում էր վթարային վիճակում և համարվում էր շահագործման համար ոչ պիտանի 1980 ական թվականների սկզբին գյուղացիների կողմից վերանորոգվեց և հարմարեցվեց որպես ծիսակատարությունների սրահ :

Համայնքի բնակչությունը իր միջոցառումները կազմակերպում է այդ սրահում :

Սակայն այսօր շենքի տանիքը գտնվում է անմխիթար վիճակում և անձրևաջրերը անարգել թափանցում թն ներս , իսկ ծածկը , որը կառուցվել էր նրբատախտակից փտել և որոշ հատվածներում մեծ անցքեր է բացվել , որտեղից կեղտը թափվում է սրահի ներս :

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Սևաքար գյուղական համայնքը ներառում է մեկ բնակավայր՝ գ. Սևաքար :
Հեռավորությունը մարզկենտրոնից 21 կմ . է :
Զբաղեցրած տարածքը 1874.27 հա . որից՝

	Համայնքային /հա/	ՀՀ քաղաքացիների /հա/	Պետական / հա/	Ընդամենը /հա/
Վարելահող	57.54	84.14	-	141.68
Այգի	-	5.43	-	5.43
Խոտհարք	7.34	34.27	-	41.61
Արոտ	570.35	-	-	570.35
Այլ հողատեսքեր	126.18	-	2.11	128.29
Բնակավայրի հողեր	6.22	22.76	-	28.98
Արդյունաբերական նշան . հողեր	14.68	-	-	14.68
Էներգետ. Տրանսպ. և կապի	0.12	-	-	0.12
Հատուկ պահպ. Տարածքներ	4.96	-	-	4.96
Անտառային հողեր	-	-	932.23	932.23
Զբային (գետեր)	3.42	-	2.52	5.94

Ինչպես երևում է համայնքն ունի բավականին հողատարածքներ գյուղատնտեսության զարգացման համար : Վարելահողերի 59.5 % ը սեփականաշնորհված է , սակայն գյուղ տեխնիկայի բացակայության պատճառով մեծ դժվարությամբ է մշակվում :

Եթե կլինեն ցանկացողներ գյուղ վերադառնալու , գյուղատնտեսությամբ զբաղվելու Համայնքը պատրաստ է համայնքային սեփականության հողերից հատկացնել գործունեություն ծավալելու համար :

Համայնքային սեփականության արդյունաբերական նշանակության հողերից 13 հա. կառուցապատման իրավունքով հանձնված է ԶՊՄԿ –ին , որն օգտագործվում է պոչամբարի ընդլայնման նպատակով :

Բավականին շատ է արոտավայրի հողերը՝ 570.35 հա. սակայն հեռավորության , տարածքների թփախալման , ճանապարհների անանցանելիության պատճառով օգտագործվում է միայն մոտ 35 – 40% -ը :

Համայնքի ժողովրդագրական բնութագիրը

		մշտական	առկա	Այդովում կանայք
1	Բնակչության թվաքանակը , մարդ	94	131	66
2	Տնային տնտեսությունների թվաքանակը	46	45	
3	Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսություններ	5 տնտեսություն 8 մարդ		

Կանայք կազմում են առկա բնակչության 50.3% - ը
 Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված 5 ընտանիքներում հաշվառված է 8
 մարդ , որը կազմում է մշտական բնակչության 8.5 % - ը , որից 2 երեխա :
 Արտագնա աշխատանքի մեկնողներ 5 մարդ , որը 2 փախստական :

Բնակչության բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի

		Ընդամենը /մարդ/	Այդովում կին
1	Մինչև 1 տարեկան	-	-
2	1 -2 տարեկան	1	1
3	3-4 տարեկան	1	1
4	5-6 տարեկան	3	2
5	7-10 տարեկան	-	-
6	11-14 տարեկան	4	3
7	15-17 տարեկան	11	9
8	18-22 տարեկան	-	-
9	23-45 տարեկան	17	5
10	46-62 տարեկան	50	20
11	63 և ավելի տարեկան	44	25

Աղյուսակից երևում է որ աշխատանքային տարիքի բնակչության թիվը կազմում է
 ընդհանուր բնակչության 51.1% - ը :

1988 թվականին Սևաքար համայնքում ապաստան են գտել Ադրբեջանից բռնազաղթված 5
 ընտանիք , որից մեկ բազմաշունչ (6 մարդ) ընտանիք մշտական բնակություն հաստատեց
 Սևաքար գյուղում :Ներկայումս նշված ընտանիքից համայնքում հաշվառված են 2 մարդ ,

որոնք գտնվում են Ռուսաստանի դաշնությունում : Նշենք նաև որ այդ ընտանիքը համայնքի բնակիչների հետ հավասար հիմունքներով օգտվել են հողի սեփականաշնորհումից :

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է եկամուտներ (հազ. դրամ)

		Վարչական բյուջե	Ֆոնդային բյուջե
	Տարեսկզբի ազատ մնացորդ	69.1	9232.8
1	Հողի հարկ	438.4	
2	Գույքահարկ	45.6	
3	Հողի վարձակալության վճար	1732.2	
	Ընդամենը սեփական եկամուտներ	2216.2	
4	Սուբվենցիա	685.3	
5	Դոտացիա	3500.0	
	Ընդամենը	6401.5	9301.9

Վարչական մասով - 6401.5 հազ . դրամ , որից սեփական եկամուտներ – 2216.2 հազ դրամ , կամ ընդհանուր եկամուտների 34.6 % ,Ֆոնդային մասով 9301.9 հազ . դրամ :

Առաջիկա տարիներին սեփական եկամուտների աճ է ակնկալվում ի շնորհիվ հողերի վարձակալության հատկացման :

Ծախսերը ուստ հոդվածների

	Հոդվածների անվանումը	Կառ. ապարատ	Մշակութ. Սիջոցառումն.	Պահուստային ֆոնդ	Ընդամենը Վարչ. բյուջե	Ընդամենը Ֆոնդ. բյուջե
4111	Աշխատավարձ	5441.4			5414.4	
4212	Էներգետիկ ծախսեր	150.0			150.0	
4231	Վարչական ծառայ.	30.0			30.0	
4234	Տեղեկատ . ծառայ.	60.0			60.0	
4239	Ընդհ. բնույթի ծառայ.		210.0		210.0	
4264	Տրանսպ . կուրթեր	150.0			150.0	
4891	Պահուստային ֆոնդ			360.1	360.1	
5113	Շենք շինությունների Կապ. վերանորոգում	8801.9				8801.9
5122	Վարչական սարքավորումներ	500.0				500.0
	Ընդամենը	15133.3	210.0	360.1	6401.5	9301.9

Ինչպես երևում է վարչական բյուջեի հիմնական մասը ծախսվում է կառավարման ապարատի պահպանման և աշխատավարձերի վրա :

Աշխատակիցների աշխատավարձերի չափը հիմնականում սահմանված է հանրապետությունում գործող նվազագույն աշխատավարձերի չափերի սահմաններում :

- Համայնքի տարածքում արդյունաբերական ձեռնարկություններ չեն գործում
- Օտառայությունների բնագավառի ձեռնարկություններ չկան :
- Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները , հիմնական սպառման շուկաներ

Բնակչության հիմնական զբաղմունքը՝ անասնապահություն , հողագործություն :

Համայնքում հաշվառված անասնազլխաքանակը՝

Խոշոր եղջերավոր անասուն - 136 գլ.

Ոչխարներ- այծեր - 85 գլ .

Խոզեր - 77 գլ .

Մեղվաբնտանիք - 200 փեթակ

Կատարվում է տարեկան մոտ 80 հա. հացահատիկային մշակաբույսերի ցանքս :

Միջին հաշվարկներով հեկտարը ստացվում է 10 – 12 ցենտներ բերք :

Ըստ մեր հաշվարկների գյուղ մթերքների արտադրանքի ծավալները մոտավոր կազմում են՝

... հացահատիկային մշակաբույսեր 100-120 տոննա

... միս /բոլոր տեսակի / 10 տոննա

... կաթ 5000 լիտր

... մեղր 8000 կգ

Հողագործությունից ստացված բերքի հիմնական մասը օգտագործվում է արտադրողների կողմից ;

Մեծ դժվարությամբ է իրացվում արտադրված մսամթերքը , որը ցածր գներով հանձնվում է վերավաճառողներին :

- Համայնքի վարչական սահմաններում կան հին գյուղատեղիներ՝ (Հունաց արտ, Քարե նավ) որտեղ առկա են հին եկեղեցիների ավերակներ :

Համայնքի վարչական սահմաններում է գտնվում Կարմրաքարի անտառային տարածքի մի մասը , որը հայտնի է իր գեղատեսիլ բնությամբ :

Սակայն առ այսօր զբոսաշրջիկների կողմից հետաքրքրության չի արժանացել :

- Համայնքի տարածքում կա եկեղեցի (Սուրբ Հովհաննես) որը 2013 - 2015 թթ . վերանորոգվել է բարերար Լևոն Նահապետյանի և ԶՊՄԿ ֆինանսական միջոցներով :
- Համայնքում դպրոցական , նախադպրոցական , կրթական այլ հաստատություններ չկան , դպրոցահասակ երեխաները հաճախում են Կապանի դպրոցներ :
- Համայնքում գործում է 1 բուժ կետ , որը ծառայում է բնակչությանը առաջնային բուժ օգնություն ցույց տալու համար , ունի 1 աշխատող՝ բուժ քույր : Վերանորոգման կարիք չունի :

Գործում է 1 գրադարան 4200 կտոր գրքային ֆոնդով , որտեղ աշխատում է 1 գրադարանավար , հաճախորդների թիվը 55 մարդ ,վերանորոգվել է 2015 թվականին : Գործում է ակումբ որտեղ կազմակերպվում է տարբեր հանդիպումներ , հրավիրվում ժողովներ :

Բնակչությունը այստեղ է անց կացնում ազատ ժամանակը , կազմակերպում խաղեր /նարդի,շախմատ/ , կատարում առօրյա քննարկումներ :

- Ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկված 5 ընտանիքներում հաշվառված է 8 մարդ , որը կազմում է մշտական բնակչության 8.5 % - ը , որից 2 երեխա :
- Աշխատանքային տարիքի բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղացիական տնտեսություններում ,այդ իսկ պատճառով գործազրկության մակարդակը հավասար է 0-ի :

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

- Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ համար հանրապետական և մարզային ծրագրեր և միջոցառումներ չի նախատեսվում :
- Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրեր և միջոցառումներ չի նախատեսվում :
- Միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների , արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող ծրագրերը :

1. Խմելու ջրագծի վերանորոգում և խմելու ջրի նոր ներհամայնքային ցանցի կառուցում

Համայնքի խմելու ջրագիծը կառուցվել է համայնքի բնակչության ջանքերով 1975 թվականին : 5 կմ . երկարությամբ ջրագծի և ներհամայնքային ցանցի մաշվածությունը այնքան մեծ է , որ ջրի կորուստները հասնում են 50% և ավելին : Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց , որը վտանգավոր հետևանքներ կարող է ունենալ :

Բնակիչների կողմից վերանորոգումները կատարվում են մասնակիորեն , և որոշ դեպքերում դառնում անախորժությունների պատճառ բնակիչների միջև :

2. Ոռոգման ջրի ջրագծի վերանորոգում

1990 թվականին համայնքի բնակիչների ջանքերով հարևան Եղեգ գյուղի վարչական տարածքից 7կմ . երկարությամբ ջրագիծ է կառուցվել , որից օգտվում էր 66 շահառու ընտանիք , ոռոգվում էր տնամերձ հողամասերը :

Տարիների ընդացքում ջրի պակասության , եղանակային պայմաններից , ջրագծի խողովակները քայքայվել , հիմնականում շարքից դուրս են եկել : Ընդացիկ նորոգումները ոչ մի արդյունք չեն տալիս , տարվա մեծ մասը ջրատարը չի շահագործվում :

Ջրատարի հիմնովին նորոգման դեպքում ջիր կորուստները կհասցվեն նվազագույնի , զգալիորեն կբարելավվի բնակչության սոցիալական վիճակը :

3. Գյուղ տեխնիկայի պակաս

Համայնքը ունի բավականին հողատարածքներ ` 142 հա . վարելահող , որի հիմնական մասը գյուղ տեխնիկայի պակասի պատճառով չի մշակվում կամ օգտագործվում է ոչ նպատակային :

Մնաքար համայնքում կա 1 թրթուրավոր և 1 անվավոր տրակտոր որոնք նախկին խորհրդային ժամանակներից մնացած ժառանգություն է , որոնց վրա կատարած ծախսերը ավելի շատ են դրանց օգտակար գործակիցը :

Համայնքում չկա հացահատիկահավաք կոմբայն , որը հիմնական պատճառ է հանդիսանում ցանքսերի նվազման , քանի որ մինչև մոտակա գյուղերից կոմբայն կրերվի , բերքի հիմնական մասը գերհասունանում կամ ոչնչանում է կլիմայական պայմաններից ելնելով :

4. Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում

Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհները անցանելի վիճակում պահելու համար պետք է պարբերաբար կստարվեն վերանորոգումներ, մաքրվեն ջրահեռացման առուներն ու սելավատարները :

Նշված հիմնախնդիրների բացահայտման համար հրավիրվել են քննարկումներ բնակչության մասնակցությամբ, ուսումնասիրվել բոլոր առաջարկները և հավանության արժանացածները դարձրել հետագա աշխատանքների հիմնական ուղղություն :

5. Ծիսակատարությունների շենքի ծածկի և տանիքի վերանորոգում

Ծիսակատարությունների շենքը՝ որը նախկինում եղել է համայնքի ութամյա դպրոց, գտնվում էր վթարային վիճակում և համարվում էր շահագործման համար ոչ պիտանի 1980-ական թվականների սկզբին գյուղացիների կողմից վերանորոգվեց և հարմարեցվեց որպես ծիսակատարությունների սրահ :

Համայնքի բնակչությունը իր միջոցառումները կազմակերպում է այդ սրահում :

Սակայն այսօր շենքի տանիքը գտնվում է անմխիթար վիճակում և անձրևաջրերը անարգել թափանցում թն ներս, իսկ ծածկը, որը կառուցվել էր նրբատախտակից փտել և որոշ հատվածներում մեծ անցքեր է բացվել, որտեղից կեղտը թափվում է սրահի ներս :

- Տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից ծրագրեր չի իրականացվում :
- Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերություններ չկան, այդ իսկ պատճառով ներդրումներ և այլ միջոցառումներ չի նախատեսվում :

Նշված հիմնախնդիրների լուծմամբ գյուղ մթերքների արտադրման ծավալները մեր գնահատումներով կավելանա շուրջ 50 – 60 % : Գյուղացիական տնտեսությունները հնարավորություն կստանան արտադրված գյուղ մթերքների որոշակի մասը վաճառել շուկայում :

Բնակչության սոցիալական վիճակի բարելավման հետ մեկտեղ ակնկալվում է բնակչության թվաքանակի ոչ բնական աճ : Երիտասարդությունը աստիճանաբար կվերադառնա գյուղ :

Ծրագրերի իրականացման համար հնարավոր ֆինանսական դոնոր է ԶՊՄԿ փբբ – ն : Ակնկալվում է նաև որ հետագա տարիներն կլինեն պետության կողմից հատկացվող դրամաշնորհային ներդրումային ծրագրեր :

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Աղյուսակում տրվում է 2016 թվականի բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծություն և գալիք հինգ տարիների կանխատեսումները

h/h	Մուտքերի անվանումը	2016թ նախ	2016թ փաստ	2017թ կանխ	2018թ կանխ	2019թ կանխ	2020թ կանխ	2021թ կանխ
1	2	3	4	5	6	7	8	9
	Բյուջետային մուտքեր ընդ .	6401.5	6401.5	6401.5	11384.1	11384.1	15384.1	15384.1
1.	Հարկային եկամուտներ ընդ.	484.0	484.0	484.0	476.0	476.0	476.0	476.0
1.1	Հողի հարկ	438.4	438.4	438.4	430.4	430.4	430.4	430.4
1.2	Գույքահարկ փոխադրամ .	45.6	45.6	45.6	45.6	45.6	45.6	45.6
2	Եկամուտներ հողի վարձակ.	1732.2	1732.2	1732.2	6732.2	6732.2	10732.2	10732.2
3	Սուբվենցիա	675.9	675.9	675.9	675.9	675.9	675.9	675.9
4	Դոտացիա	3500.0	3500.0	3500.0	3500.0	3500.0	3500.0	3500.0

Մեփական եկամուտների աճի կանխատեսումները պայմանավորված են նրանով , որ ակնկալվում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի հետ 71.6 հա հողատարածքներ վարձակալության պայմանագրի կնքում , ուստի ակնկալվում է և վարձավճարների ավելացում :

2.5 Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Վերլուծելով վերը նշված բոլոր փաստերը , ակնհայտ է դառնում որ Սևաքար գյուղական համայնքի զարգացման դժվարություններն ու խոչընդոտները հիմնականում կապված են խմելու և ոռոգման ջրերի սակավության հետ , հիմնահարց որի առ այսօր լուծված չլինելու հիմնական պատճառներն են բավականին պակաս ջրային պաշարները և ֆինանսական միջոցների աղությունը :

Ոռոգման և խմելու ջրի ինչպես նաև հացահատիկահավաք կոմբայնի առկայությունը մեծ խթան կհանդիսանա ինչպես գյուղատնտեսության զարգացման այնպես էլ համայնքի բնակչության սոցիալական պայմանների բարելավման համար :

2.6 Համայնքի ուժեղ կողմերի , հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

• Համայնքի ուժեղ կողմերը

- 1 . Համայնքում տիրող առողջ մթնոլորտ
- 2 . Մեծ աշխատուժի առկայություն
- 3 . Բնակլիմայական պայմաններ
- 4 . Բավարար տարածքներ հողագործության և անասնապահության համար
- 5 . Աշխապհագրական դիրք

• Համայնքի թույլ կողմերը

- 1 . Խմելու և ոռոգմանջրի պակաս
- 2 . Ծնելիության նվազում ելնելով տնտեսական վիճակից
- 3 . Վատ տրանսպորտային կապ մարզկենտրոնի հետ
- 4 . Գյուղ տեխնիկայի պակաս

• Հնարավորություններ

- 1 . Գյուղատնտեսությա զարգացում ի շնորհիվ Բավարար հողային տարածքների
- 2 . Բյուջեի սեփական եկամուտների աճ , գույքահարկի և հողի վարձակալության նոր պայմանագրերի կնքման հետ պայմանավորված :
- 3 . Բավարար պայմաններ ներդրումային ծրագրեր իրականացնելու համար :

• Սպառնալիքներ

- 1 . Բնական աղետներ
- 2 . դրամի փոխարժեքի տատանումներ
- 3 . Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակ
- 4 . Երիտասարդների արտահոսք պայմանավորված հանրապետության ընդհանուր տնտեսական վիճակով ;

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում:
3.1 Համայնքի զարգացման տեսլական

ՀԶԾ իրականացումով կբարելավվի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը , աճ կգրանցվի գյուղատնտեսության ոլորտում: Բացատրական ու ակնառու աշխատանքների շնորհիվ բնակչության մեջ ձեռք կբերվի հավատ վաղվա օրվա ու ապագայի նկատմամբ , կլինի վստահություն թե տեղական և թե ամբողջ հանրապետության իշխանությունների հանդեպ :

- Ծրագրերի իրագործման հետ մեկտեղ կզարգանա գյուղատնտեսությունը , կբարելավվի բնակչության սոցիալ - տնտեսական վիճակը , կյանքը կդառնա բարեկեցիկ , առօրյան հետաքրքիր :
- Հինգ տարիների ընթացքում տարեց-տարի տնտեսությունները սեփական եկամուտների աճ կունենան , որը կհասնի 50-60 %- ի :
- Համայնքում աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքներ չեն լինի, իսկ սոցիալապես անապահով մի քանի ընտանիքներ այլևս կարիք չեն ունենա պետության կողմից տրվող օգնությանը:
- Ծրագրի իրագործումով ակնկալվում է բնակիչների թվի ոչ բնական աճ ,իսկ երիտասարդ ընտանիքների վերադարձել պայմանավորված նաև բնական աճ:

Աղքատ ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքներին և սեփական եկամուտների տարեկան աճը ըստ տարիների համաձայն աղյուսակ N1

h/h	Տարիներ	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընդհանուր թվին	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխություն	Ծանոթություն
1.	2017թ.	8.5	5	10	
2.	2018թ.	6	10	15	
3.	2019թ.	5	20	20	
4.	2020թ.	2	30	25	
5.	2021թ.	1	50	30	

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ:

Համայնքում յուրաքանչյուր պարտադիր խնդիրների լուծման ֆինանսավորման համար, անհրաժեշտ և հետևողական աշխատանքներ են տարվելու բարեգործների, նվիրատուների, խոշոր գործարարների և այլ աղբյուրներ հայտնաբերելու համար:

- Խմելու ջրագծի վերանորոգում և ներքին ցանցի կառուցում ծրագրի իրականացմամբ համայնքի բնակչությունը կունենա շուրջօրյա անխափան ջրամատակարարում , որը առողջ ու բարեկեցիկ ապրելակերպի առաջնային նախապայմանն է :
- Ոռոգման ջրի ջրագծի վերանորոգում ծրագրի իրականացմամբ համայնքի բնակչությունը կստանա բավարար քանակությամբ ոռոգման ջուր , կոռոգվի տնամերձ հողատարածքները , կավելանա բանջարաբուստանային կուլտուրաների արտադրման ծավալները և որակը :
- Նոր հացահատիկահավաք կոմբայն ձեռք բերելու դեպքում համայնքում տարոց-տարի կավելանա ցանքատարածքները , ակնկալվող բերքի ծավալների աճի ի շուկա արտահանելու հնարավորության դեպքում տնտեսությունները կունենան կայուն երկարաժամկետ տնտեսական աճ :
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում ծրագրով համայնքի ճանապարհները կբարեկարգվեն , կմաքրվեն ջրահեռացման առուները , կստողծվի նորմալ պայմաններ մեքենաների և գյուղ տեխնիկայի ազատ տեղաշարժի համար, որը իր հերթին խթան կհանդիսանա գյուղատնտեսության զարգացման և բնակչության ապրելակերպի բարելավման համար :
- Միսակատարությունների սրահի ծածկի և տանիքի վերանորոգմամբ շինության հոտազա քլքայումը կբացառվի ,շենքը կստանա նորմալ գեղոցիկ տեսք , բնակչությունը կկարողանա նորմալ պայմաններում կազմակերպել և անց կացնել տարբեր միջոցառումներ :

4.2.2 ՉՕ ֆինանսավորում

Համայնքի զարգացման ծրագրերի ֆինանսավորումը ակնկալվում է արտաքին դրամաշնորհների, բարեգործների, նվիրատուների և այլ աղբյուրների, ինչպես նաև համայնքի սեփական եկամուտների հաշվին :

- ՀՉՕ – ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար առկա միջոցները սուղ են , աշխատանքներ են տարվում հնարավոր աղբյուրներ գտնելու համար:
- Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգման համար ֆինանսական միջոցները առկա է , որը գոյացել է նախորդ տարիների համայնքի բյուջեի խնայողությունների հաշվին :
- Խմելու ջրագծի վերանորոգման և ներքին ցանցի կառուցում
- Ոռոգման ջրագծի վերանորոգում
- Գյուղ տեխնիկայի ձեռք բերում
- Ծխակատարությունների սրահի ծածկի և տանիքի կառուցում

Վերը նշված վերջին չորս հիմնախնդիրների հանգուցալուծման համար ֆինանսական միջոցներ չկան , ակնկալվում է դրամաշնորհային ներդրումներ հանրապետական ծրագրերից , ինչպես նաև օգնություն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից :

ՀՉՕ ընդգրկված ծրագրերի ֆինանսավորումը ամփոփված է հավելված 2-ում բերված աղյուսակում

1. ՀԶՄ մոնիթորինգ

ՀԶՄ մոնիթորինգի ծրագրերը, ցուցանիշների հավաքագրման հաճախականությունը, տեղեկատվության աղբյուրները, ամփոփվում են մոնիթորինգի անձնագրում (հավելում-3)

« ԽԱՄԵԼՈՒ ՋՐԱԳԺԻ ՎԵՐԱՆՈՐՈՒԳՈՒՄ Լ: ՆԵՐՋԻՆ ԳԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ »
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ 1. խմելու ջրագծի վերանորոգում 2. ներքին ցանցի կառուցում	Ցուցանիշներ՝ Տնտեսությունների խմելու ջրով ապահովվ. արտ. %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		20%	20%	90%	95%	95%	95%
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ 1. շուրջօրյա անխափան ջրամատակարարում 2. ներմալ ապրելակերպի ապահովում	1.						
	Ցուցանիշներ՝ Բնակչության գոհունակություն արտ. %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		5%	5%	70%	70%	80%	80%
	2.						
	Ցուցանիշներ՝ Բնակչ. գոհունակ. արտ. %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		5%	5%	70%	70%	80%	80%
	Ծրագրի հիմնական գործողությունները՝ 1. Արցույթի հայտարարություն 2. Նախագծերի կազմում 3. Գնումների գործընթացի իրականացում 4. Շին մոնիտաժային աշխատանքներ	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ջրագծի անխափան աշխատանքի վերահսկողություն 1.2. Պարբերաբար ընթացիկ սպասարկման իրականացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Բնակչության շրջանում հարցումների իրականացում և բնակիչների նկատառումների ամփոփում և իրականացում 2.2.					
Ընթացիկ ծախսեր՝ 3000.0 Կապիտալ ծախսեր՝ 7000.0 Ընդհանուր բյուջեն՝ 10000.0							
Ծրագրի բյուջեն մլն.դ.	Ընթացիկ ծախսեր՝ 3000.0 Կապիտալ ծախսեր՝ 7000.0 Ընդհանուր բյուջեն՝ 10000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բանվորական ուժ , տեխնիկա , սարքավորումներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսավորման աղբյուրի բացակայություն						
Ծրագրի հիմնական չափառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացմամբ խմելու ջրի կորուստները կհասցվեն նվազագույնի ,կվերացվի անձրևաջրերի թափանցումը խմելու ջրագծի ցանց , համայնքի բնակչությունը կունենա շուրջօրյա անխափան ջրամատակարարում , որը նորմալ ապրելակերպի առաջնային նախապայմանն է :						

(Ծրագրի իրականացումը)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ 1. Ոռոգման ջրագծի վերանորոգում 2. Տնտեսություններին ոռոգման ջրով ապահովում	Ցուցանիշներ Տնտեսությունների առկա է ջրով ապահովվ. արտ. %	Ելակետային արժեք 2016 10%	2017 10%	2018 30%	2019 85%	2020 90%	2021 95%
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ 1. Տնամերձ հողամասերի ոռոգում 2. Արտադրվող բանջարաբուստանային կուլտուրաների ծավալների աճ	Ցուցանիշներ՝ բնակչության գոհունակություն արտ. %	Ելակետային արժեք 2016 5%	2017 5%	2018 30%	2019 80%	2020 80%	2021 90%
2.	Ցուցանիշներ՝ բնակչության գոհունակություն արտ. %	Ելակետային արժեք 2016 5%	2017 5%	2018 30%	2019 80%	2020 80%	2021 90%
Ծրագրի հիմնական գործողությունները՝ 1. Մրցույթի հայտարարություն 2. Նախագծերի կազմում 3. Գնումների գործընթացի իրականացում 4. Գին մոնիտաժային աջնատանքներ	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Ջրագծի անխափան աշխատանքի վերահսկողություն 1.2. Պարբերաբար ընթացիկ սպասարկման իրականացում 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Բնակչության ջրջանում հարցումների իրականացում և բնակիչների նկատառումների ամփոփում և իրականացում 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 3000.0 Կապիտալ ծախսեր՝ 9000.0 Ընդհանուր բյուջեն՝ 12000.0						
Ծրագրի էր. սկանազման համար մեկրամեջտ այլ ռեսուրսներ	Բաժավորական ոժ , տեխնիկա , սարքավորումներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական աղբյուրի բացակայություն						
Ծրագրի հիմնական առաջնությունները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացմամբ ջրի կորուստները կհասցվեն նվազագույնի , համայնքի բնակչությունը կստանա ոռոգման ջրով , կոռոգվի տնամերձ հողատարածքները , կավելանա բանջարաբուստանային կուլտուրաների արտադրական ծավալները և որակը :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում »

(Ծրագրի անվանում)

Պարտագիր խնդիր, որի ունմանն է միտված ծրագիրը	Համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը, սանիտարական մաքրումը						
Ծրագրի անմիջական նպատակ՝ 1.Ներհամայնքային և դաշտամիջան ճանապարհների բարեկարգում	Ցուցանիշներ՝ Տնտեսությունների	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
	ապահովվ. արտ. %	50%	55%	65%	70%	80%	90%
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ 1. Հողային աշխատանքների իրականացում 2.Ջրահեռացման խրամուղիների պատրաստում	1.						
	Ցուցանիշներ՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Բնակչության	2016	2017	2018	2019	2020	2021
	գոհունակություն արտ. %	20%	30%	70%	70%	80%	80%
	2.						
	Ցուցանիշներ՝	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
	Բնակչ.գոհունակ.	2016	2017	2018	2019	2020	2021
	արտ. %	20%	30%	70%	70%	80%	80%
Ծրագրի հիմնական գործողությունները՝ 1.Մրցույթի հայտարարություն 2.Նախագծերի կազմում 3.Գնումների գործընթացի իրականացում 4.Հողային աշխատանքների իրականացում	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Պարբերական վորահսկողության իրականացում 1.2 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն մլն.դ.	Ընթացիկ ծախսեր՝ 3000.0 Կապիտալ ծախսեր՝ 7000.0 Ընդհանուր բյուջեն՝ 10000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բանվորական ուժ , տեխնիկա , սարքավորումներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Անհրաժեշտ տեխնիկայի բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Յուրաքանչյուր տարի շարունակական 2017-2021թթ						
Ծրագրի հանադուր նկարագրություն	Կրթելավվեն ճանապարհները ,կմաքրվեն ջրահեռացման խրամուղիները կստեղծվի նորմալ պայմաններ մեքենաների և գյուղ տեխնիկայի ազատ տեղաշարժի համար , որը իր հերթին խթան կհանդիսանա գյուղատնտեսության զարգացման և բնակչության ապրելակերպի բարելավման համար :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Նոր հացահատիկահավաք կոմբայնի ձեռք բերում»

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներում գյուղատնտեսության զարգացման խթանումը						
Ծրագրի անմիջական նպատակ՝ 1. Նոր հացահատիկահավաք կոմբայնի ձեռք բերում	Ցուցանիշներ՝ Գյուղ տեխնիկայից օգտվող տնտես. թիվը արտ. %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0%	0%	0%	50%	70%	98%
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ 1. Ցանքատարածքների ավելացում 2. Բերքի անկորուստ և ժամանակին հավաքում	1.						
	Ցուցանիշներ՝ բնակչության գոհունակություն արտ. %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0%	0%	0%	30%	60%	90%
	2.						
	Ցուցանիշներ՝ բնակչության գոհունակություն արտ. %	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
2016		2017	2018	2019	2020	2021	
0%		0%	0%	30%	60%	90%	
Ծրագրի հիմնական գործողությունները՝ 1. Ֆինանսական միջոցների ձեռք բերում 2. Գնման գործընթացի նազմանկերպում	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Վերահսկողություն նորմալ շահագործման նկատմամբ և ընդացիկ նորոգումների կազմակերպում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 5000.0 Կապիտալ ծախսեր՝ 15000.0 Ընդհանուր բյուջեն՝ 20000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դրամական միջոցների ձեռք բերում						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական աղբյուրի բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2019թ						
Ծրագրի համառոտ սկարագրություն	Ծրագրի իրականացմամբ համայնքում տարեց- տարի կավելանա ցանքատարածքները , բնակչությունը ակնկալվող բերքի ծավալների աճի և շուկա արտահանելու հնարավորության պայմաններում կունենա կայուն երկարաժամկետ տնտեսական աճ :						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

« Ծիսակատարությունների սրահի ծածկի և տանիքի վերանորոգում»
(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում						
Ծրագրի անմիջական նպատակ՝ 1. Ծիսակատարությունների սրահի ծածկի և տանիքի վերանորոգում	Ցուցանիշներ՝ Ծիսակատարահից օգտվող տնտես.% ը	Ելակետային արժեք 2016 80%	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021 80% 90% 90% 90% 95%				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ՝ 1. Գեղեցիկ վերանորոգված ծիսակատարությունների սրահ	1. Ցուցանիշներ՝ բնակչության գոհունակություն արտ.%	Ելակետային արժեք 2016 80%	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021 80% 95% 95% 95% 95%				
	2. Ցուցանիշներ՝ բնակչության գոհունակություն արտ.%	Ելակետային արժեք 2016	Թիրախային արժեքներ 2017 2018 2019 2020 2021				
Ծրագրի հիմնական գործողությունները՝ 1.Մրցույթի հայտարարություն 2.Նախագծերի կազմում 3.Շինարարական աշխատանքների իրականացում	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Վերահսկողություն նորմալ շահագործման նկատմամբ կընդացիկ նորոգումների կազմակերպում 1.2. 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. 2.2.						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ 2000.0 Կապիտալ ծախսեր՝ 4000.0 Ընդհանուր բյուջեն՝ 6000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բանվորական ուժ , տեխնիկա, շինարարական նյութեր						
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ֆինանսական աղքատի բացակայություն						
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2018թ						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Կվերանորոգվի ծիսակատարությունների սրահի ծածկը և տանիքը որը գտնվում է անմխիթար վիճակում , բնակչությունը կկարողանա նորմալ պայմաններում կազմակերպել և անց կացնել տարբեր միջոցառումներ :						

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]